

Len
✓ 1831

ԼԵԻՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ.

1999

ԺՈՂՈՎԱՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

ՄԵԶԱՆՈՒՄ




ՄՈՍԿՈՒՄ.

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.

1892

(43)




ԽԴ Խոսքիւն ՀԻԻԻ
ՅԱԻՐԱՆԻ
ՏՅԻՆԻՆ

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ.

ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

ՄԵԶԱՆՈՒՄ



ՀՔ 1837

41831-60

ՄՈՄԿՈՒԱ

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻԶ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.

1892

(43)

Զգտում՝ դէպի եւրոպականը—ահա մի առանձնայատկութիւն, որով հայը, հին դարերից ի վեր զանազանուել է իրան շրջապատող ասիական ցեղերից։ Թուրք-մօնղոլական արշաւանքները մրկի նման անցնելով արաբացիների աւերումներից նոր վերականգնող հայաստանով՝ քաք քարի վրայ չը թողին այդ թշուառ երկրում։ Սյդ արշաւանքները զլորեցին հային անկենդանութեան մէջ և ընդմիջեցին դարերով նրա մտաւոր-բարոյական կապը եւրոպայի հետ։ Երբ հայաստանի արեւելեան մի մասը այս դարու սկզբում անցաւ ռուսաց ձեռքը, իսկ Պօլսում ուժեղացաւ եւրոպական ազդեցութիւնը, այդ ժամանակից սկսեց կրկին մուտք գործել եւրոպականութիւնը հայերի մէջ. կստուեց զարգացման մի նոր շրջան,

որի ամենաբնորոշ արտայայտիչներն էին. նոր աշխարհիկ գրականութիւնը և եւրոպական ձևի ուսումնարանները: Լուսաւորութեան այդ ուժեղ գործօնները պատրաստեցին դարեւոր ստրկութիւնից բխացած և ընկած մի ազգ՝ ըմբռնելու Եւրոպայի յառաջադիմութեան նոր սկզբունքները. անհատի, ժողովրդի և կնոջ ազատութիւնը:

Եւրոպական ազդեցութիւնը արեւմտեան հայերի մէջ զանազան քաղաքական և հասարակական աննպաստ պայմանների շնորհիւ շատ դանդաղ ու թոյլ կերպով էր մուտք գործում: Կարելի է մինչև անգամ ասել որ միսսիօնարների պրօպագանդայի դէմ ինքնապաշտպանութեան զգացումը արեւմտեան հայերի մօտ նորաձև ուսումնարաններ հիմնելու զխաւոր շարժառիթն էր: Արեւելեան հայերի համար պայմանները աւելի նպաստաւոր էին և այդ պատճառով վերածնութեան պրօցեսը աւելի ուժեղ արտայայտուեց: Աբովեան, Նազարեան, Լազարեան ճեմարան, Ներսեսեան դպրոց անունների հետ է կապուած այդ շրջանի սկզբնաւորութիւնը ռուսահայերի մօտ:

Սակայն վերոյիշեալ ուսումնարանները, ինչպէս և նոցա հետ մի այլ երկուսն էլ, Աղապապեան — Աշտարխանում և Խալիպեան — Թէօփուսեայում, այնքան քիչ էին թւով որ դոցանով լուսաւորել մի ազգ նոյն էր, ինչ եթէ մէկը ուղենար երկիրը ծածկող խաւար գիշերը փարատել մի քանի վառուած ճրագներով: Պէտք էր ժողովրդի ստուար մեծամասնութիւնը ազատել տգիտութեան կապանքներից,

պէտք էր որ ըստ կարելոյն ազգի իւրաքանչիւր անդամին միջոց տրուէր ազատուելու խալիֆայական կրթութիւնից և ստանալու լաւագոյն ուսում: Իսկ այդ կարելի էր անել, եթէ աւելի փոքր, բայց թւով շատ ուսումնարաններ բացուէին: Այդ լաւ ըմբռնած է երեւում Մատթէոս Ժողովրդասէր կաթողիկոսը, Պօլսի նախկին պատրիարքը, բանալով թեմական¹⁾ և ծխական ուսումնարաններ, որոնց ղեկը նա յանձնեց աշխարհականներին:

Ծխական ուսումնարանները, ժողովրդի լուսաւորութեան այդ նշանաւոր գործօնները, օրէց օր բազմացան և Գէորգ կաթողիկոսի օրով աւելի կանոնաւոր ու եւրոպական ձև ստացան: 1883 թւին փակուելով նրանք 1886-ին վերաբացուեցան 1884 թւի փետրուարի 14-ին Բարձրագոյն հաստատուած կանոններով, որոնք ստեղծեցին մեր ծխական ուսումնարանների համար գոյութեան նոր պայմաններ:

Չը նայելով այդ հիմնարկութիւնների ահագին նշանակութեան մեր ժողովրդի լուսաւորութեան գործում՝ շատ քիչ տեղեկութիւններ ունի մեր հասարակութիւնը նոցա մասին. այդ սակաւ կամ թերի հասկացողութիւնը առաջացնում է անտարբերութիւն որ արգելք է լինում այդ ուսումնարանների աւելի կանոնաւոր զարգացման: Մինչդեռ այժմ, երբ կան բաւականաչափ պաշտօնական տեղեկու-

¹⁾ Թեմական դպրոցների և Էջմիածնի ձեմարանի մասին մտադիր ենք յետոյ առանձին յօդուածով խօսել:

թիւներ¹⁾ մեր ծխական ուսումնարանների մասին նոցա վերաբացման օրից, կարծում ենք, կարելի կը լինի հետաքրքրել հասարակութիւնը նոցանով և դարձնել նոցա համակրութիւնը և սերը դէպի այդ նշանաւոր դործօնները: Այդ անկող համար հարկ չը կայ լիբերական զեղումների դիմել, քանի որ թւերը ամենահամոզեցուցիչ փաստեր են:

Մօտ ծանօթութիւնը մեր ծխական ուսումնարանների հետ նախ և առաջ երկու կէտերի վրայ է դարձնում մարդու ուշադրութիւնը: Առաջին, որ հայոց ծխական ուսումնարաններում սովորող հայ (լուսաւորչական) երեխաների թիւը աւելի է, քան կովկասեան ուսումնական շրջանի մէջ գտնուող բոլոր զիննաղեաներում, բէալական ուսումնարաններում, ուսուցչական ինստիտուտում ու սեմինարիաներում, քաղաքային, արհեստավարաց, սկզբնական և նոյն

¹⁾ Տես. «Վիճակագրական տեղեկութիւնք Եկեղ. ծխական ուսումնարանաց հայոց», Վաղարշապատ, 1888, 1889, 1890 թթ. և «Отчетъ попечителя Кавк. учедн. округа за 1889, 1890 гг.» Կովկասեան ուսումնարանական շրջանից դուրս գրտնուող հայոց ծխական ուսումնարաններից միայն Աստրախան քաղաքին է որ մտել է «Վիճ. տեղեկութիւնների» մէջ. իսկ Բեսարաբեայի թեմի, օր. Քիշինիովի, Օդեսայի, Նոր-Նախիջևանի ևն տեղերում եղած ուսումնարանների մասին պաշտօնական ոչ մի տեղեկութիւն մեզ յայտնի չէ:

իսկ մասնաւոր ուսումնարաններում սովորող հայ երեխաների թիւը. այսպէս օրինակ. 1889 թ. կովկասեան շրջանի բոլոր վերոյիշեալ ուսումնարաններում սովորում էին 9,192 հոգի, մինչդեռ հայոց միմիայն ծխական ուսումնարաններում, առանց հաշուելու մեր 3 թեմական դպրոցներում և Էջմիածնի ձեմարանում սովորողներին, կային 11,352 հոգի: Երկրորդ, որ մեր ծխական ուսումնարաններում ուսում են առնում գլխաւորապէս մեր ժողովրդի ամենաչքաւոր ու զրկուած խաւերի զաւակները: «Վիճակագրական տեղեկութիւններից» հեշտ է պուրս բերել որ մեր ծխական ուսումնարաններում սովորողների 31% երկրագործների զաւակներ են, ուրեմն զիւղացիների, 30% մանր վաճառականների, 28% արհեստավարների և մնացածը՝ հողերականների ու մանր աստիճանաւորների: Այն էլ ի նկատի պէտք է ունենալ որ սովորողների մօտ 38% բոլորովին ձրի են ստանում իրանց ուսումը, իսկ մնացածները ամենաչնչին վճարով, որի չափը, համապատասխան իւրաքանչիւր ծնողի կարողութեան, որոշում է, զոնեա զիւղերում, ինքը համայնքը:

Մեր ծխական ուսումնարանների մասին պաշտօնական տեղեկութիւններ յայտնի են միայն 4 տարւայ համար՝ 1886 — 90: Վաղարշապատում լոյս տեսած «Վիճ. տեղ.»-ը Կովկասեան ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուի «Отчетъ»-ի հետ համեմատելիս պէտք է ի նկատի ունենալ որ վերջինում չին յիշուած Աստրախան քաղաքի 2 ծխական ու-

ուսումնարանները, որովհետև այդ քաղաքը ընկնում է կովկասեան շրջանից դուրս, որին պատկանում են հետեւեալ նահանգները. Ստաւրոպոլի, Թիֆլիսի, Բուժայիսի, Գանձակի, Երևանի, Բաքուի և հետեւեալ աշխարհները (ОБЛАСТЬ). Դաղստանի, Կուբանի, Թերեքի և Կարսի: Բացի այդ «ОУЧЕТ»-ում շատ տեղերի տղայոց և օրիորդաց ուսումնարանները համարուած են իբրեւ մէկ խառն ուսումնարան և ոչ առանձին առանձին ուսումնարաններ, ինչպէս այդ արուած է «Վիճակագրական տեղեկութիւնք» հրատարակութեան մէջ:

Որպէս զի ընթերցողի համար հեշտ լինի մի անգամից ընդհանուր զաղափար կազմել մեր ծխական ուսումնարանների մասին նոցա 4 տարուայ գոյութեան ընթացքում, մենք կազմեցինք ներքեւ բերուած մանրամասն աղիւսակը, որից երևում է թէ ո՞ր թեմում, ո՞րքան երկդասեան և միդասեան, տղայոց և օրիորդաց ուսումնարաններ կան, իսկ միջին թուերը ցոյց են տալիս թէ ո՞ր թեմում ի՞նչ ուսումնարաններ աւելի են և առհասարակ նոցա միջին թիւը չորս տարուայ ընթացքում:

Թիւը ըստ թիւի	Երևանի		Թիֆլիսի		Ալքաթի		Շամակու		Աստրախանի		Գ ու մ ար
	տղայ.	օրիոր.	տղայ.	օրիոր.	տղայ.	օրիոր.	տղայ.	օրիոր.	տղայ.	օրիոր.	
51,7	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Ընդհանր.
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
47,1	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
15,5	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
11,7	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
19,2	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
146	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	
	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	Երկր.	Միգր.	

Վերև բերած թվերից մենք տեսնում ենք որ,

1) մեր ծխական ուսումնարանների թիվը սկսած 1886-ից մինչև 89-ը աստիճանաբար աւելացել է և հասել 168-ի, իսկ 89—90 ուս. տարում այդ թիվը յանկարծ իջնում է 156-ի: Թէ ի՞նչն է այդ ցաւալի երեւոյթի պատճառը՝ մենք ուղղակի պատասխան չենք գտնում պաշտօնական հրատարակութիւնների մէջ, սակայն վերջին երկու տարուայ տպած ցուցակների համեմատութիւնը ցոյց է տալիս, որ 89—90 ուս. թիւն մի քանի գիւղերում ուսումնարանները փակուել են, երեւի եկամուտների նուազութեան պատճառով, այդպիսի գիւղերից են, օրին. համար, Թիֆլիսի թեմում. Ծուղրուտ, Շուշաւեր, Զալալ-օղլի. Երեւանի թեմում. Զիգրալու, Ուլիա-նորաշէն, Գնիշիկ. Արցախի թեմում. Սարոշէն, Ներքին Թաղավարդ, Վարդաշէն և այլն: Բացի այդ նոյն թիւն փակուել էին հոգեւոր կառավարութեան հրամանով Գանձակ քաղաքի օրիորդաց և տղայոց երկգասեան ուսումնարանները հռչակաւոր «սատանայական» խնդրի առիթով:

2) Միջին թւով բոլոր ծխական ուսումնարանների մեծ մասը, 74%, ունեն երեք տարուայ դասընթաց (միդասեան) և սոցա մեծ մասը 68% տղայոց ուսումնարաններ են, իսկ 5 տարուայ դասընթաց ունեցող (երկդասեան) ծխական ուսումնարանների թիւը թէ տղայոց և թէ օրիորդաց հաւասար է, միջին թւով ընդամենը 19:

3) Բացարձակ վերցրած ամենից շատ ուսումնա-

րաններ կան Երեւանի թեմում, յետոյ Թիֆլիսի, Աստրախանի, Արցախի և վերջին տեղն է բռնում Շամախու թեմը:

4) Եթէ համեմատելու լինենք օրիորդաց ուսումնարանների բացարձակ թւերը, իւրաքանչիւր թեմում, կը տեսնենք, որ ամենից շատ նոքա գտնուում են Թիֆլիսի թեմում, յետոյ Երեւանի, Աստրախանի, Շամախու և վերջին տեղը բռնում է Արցախը, բայց վերցնելով օրիորդաց ուսումնարանների թւերը համեմատութեամբ իւրաքանչիւր թեմում եղած բոլոր ծխական ուսումնարանների թւի հետ՝ կը տեսնենք, որ առաջի տեղն է բռնում Աստրախանի թեմը, ուր նոքա կազմում են ընդհանուր թւի (19) համարեա կէսը 8, յետոյ Շամախու, Թիֆլիսի, Երեւանի և դարձեալ վերջին տեղը բռնում է Արցախի թեմը: Ուրեմն, Երեւանի և Արցախի թեմերում, այսինքն բուն Ռուսահայաստանում, իդական սեռի լուսաւորութեան վրայ շատ քիչ ուշադրութիւն է դարձնուում:

Հասկանալի է որ ուսումնարանների թիւը առանձնապէս առած դեռ քիչ բան է պարզում, որովհետեւ միայն այն ժամանակ կարելի է ճիշտ գաղափար կազմել նրանց շատութեան կամ սակաւութեան մասին, երբ նրանց թիւը համեմատենք այն ազգաբնակչութեան քանակութեան հետ, որի պահանջների գոհացնելու համար նոքա գոյութիւն ունեն: Սորանից պարզ է որ նախ և առաջ մենք պէտք է ճիշտ իմանանք ամբողջ Կովկասում ապրող հայերի թիւը:

Հիմնուելով գլխավորապէս 1886 թվականի ընտանեկան ցուցակների վրայ, որոնց ցուցմունքը առհասարակ իրականից պակաս է լինում, և ի նկատի ունենալով ազգաբնակչութեան բնական աճումը՝ մենք կարող ենք 1889 թվականի վերջում ընդունել որ ամբողջ Կովկասում կար 7,604,000 բնակիչ¹⁾, որոնցից 995 հազար հայ: Այդ թվից մօտ 32 հազարը հայ-կաթոլիկներ են, և մօտ 3 հազար հայ-բողոքականներ, ուրեմն 960 հազար հայ լուսաւորչականներ: Կովկասի հայերից միայն 30 հազար հոգի են (այն էլ լուսաւորչական) ընկնում Հիւսիսային Կովկասին, մնացածը ապրում է Անդր-Կովկասում:

Մի կողմ թողնելով այլադաւան հայերի ուսումնարանները, որոնց մասին զոնեա մեր գիտեցածը շատ չնչին²⁾ է, տեսնենք թէ ամենայնջող ուսումն. տարում (1888—89) հայոց ծխական մի ուսումնարանը քանի հայի էր ընկնում, չը հաշուած Աստրախան քաղաքի ծխական երկու ուսումնարանները, Կովկասեան շրջանից դուրս լինելու պատճառով: Մի ամենահասարակ թւաբանական գործողութիւն ցոյց է տալիս, որ՝

1) Кавказскій календарь за 1889 г. այս թիւը համարում է դեռ պակաս իսկականից: Կովկասից դուրս ուսանողների թւի մասին ձիշտ տեղեկութիւն չունինք և ենթադրում ենք մօտ 100 հազար:

2) 1890 թ. Отчетъ-ից իմանում ենք, որ այլադաւան հայերը ունէին. բողոքականները մի մի ուսումնարան Ծամախի և Բաքու, իսկ կաթոլիկները՝ Ախալցխա 1 և Արդուին 6 ուսումն.

1) Ծխական ուսումնարանը ընկնում էր 5.783 հայի: Նոյն ուսումնական տարում Կովկասեան շրջանում կային 876 սկզբնական ուսանող ուսումնարաններ (начальная школа). ուրեմն 1 սկզբնական ուսումնարանը ընկնում էր 8.680 բնակչի: Համեմատութեան համար բերում ենք Ժողովրդի լուսաւորութեան մասին ամենից շատ հոգացող եւրոպական երկրների՝ Փրանսիայի և Պրուսիայի մասին պրոֆ. Juraschek-ի «Geografisch-statistische tabellen aller Länder der Erde, 1890 J.» հրատարակութիւնից հետեւալը. 1886 թվականին, Փրանսիայի մօտ 38 միլիօն ազգաբնակչութեան ընկնում էին 79.755 Ժողովրդական ուսումնարաններ, այսինքն մէկ ծ. ուսումնարան 478 հոգու, և Պրուսիայի մօտ 28 միլիօն ազգաբնակչութեան 34,016 ծ. ուսումն. այսինքն մէկ ծ. ուս. 888 հոգու: Եւրոպական Ռուսաստանի 90 միլիօն ազգաբնակչութեան 38.739 ծ. ուսումն. է հաշւում նոյն հեղինակը, այսինքն մէկ ուս. 2.321 հոգու:

Թէ ի՞նչ է նշանակում 5.783 հային մի ծխ. ուսումնարան—այդ աւելի պարզ կը լինի, եթէ հաշւենք ոչ թէ ամեն հասակի հայ ազգաբնակչութիւնը, այլ միայն նրանց, որոնց համար է ուսումնարանը, այսինքն ուսումնարանական հասակ ունեցողներին: Մեր ծխական ուսումնարաններում սովորում են 8 — 15 տարեկան երեխաներ: Ընդհանուր վիճակագրութիւնից յայտնի է, որ 10 հազար բնակչից մօտ 1500-ը պատկանում են այդ հասակին: Այդ հաշ-

ևով մէկ ծխ. ուսումնարանը ընկնում է 868 հայ երեխայի, մինչդեռ միջին թւով, ինչպէս ներքեւ կը տեսնենք, մեր 1 ծխ. ուսումնարանում սովորում են 68 հոգի, ուրեմն իւրաքանչիւր 868 հոգուց 800 -ը մնում են դուրս մեր ծխ. ուսումնարաններից: Գուցէ ընթերցողը կարծի թէ ծխ. ուսումնարանների սակաւութիւնը լրացնում են մեր թեմական դպրոցները կամ պետական սկզբնական ուսումնարանները: Ծիշտ է, մեր թեմական դպրոցներում և էջմիածնի ճեմարանում սովորողների թիւը հասնում է 1068 հոգու, որոնցից կէսը պատկանում է վերոյիշեալ հասակին, բայց պարզ է թէ հրքան քիչ փոփոխութիւն է մտնում այդ թիւը մեր վերոյիշեալ եզրակացութեան մէջ, իսկ ինչ վերաբերում է պետական սկզբնական ուսումնարաններին՝ մենք արդէն տեսանք որ նրանց թիւն էլ այնչափ է որ 1500 երեխային (8—15 տար.) ընկնում է մէկ այդպիսի ուսումնարան, մինչդեռ այժմ մէկ սկզբ. ուսումնարանում սովորում են միջին թւով միայն 60 հոգի, որոնցից հայ-լուսաւորչական 7,5% կամ 3 հոգի: Ուրիշ կարգի թէ պետական և թէ մասնաւոր ուսումնարաններում հայերի թիւը աւելի ևս քիչ է:

Հայոց ծխական ուսումնարաններում 1886—90 թւականը սովորում էին.

1886-87 ուս. տարում	4.472	տղ.	3.047	աղջ.	ընդամ.	7.519	հ.
« 87-88	« 6.577	« 3.792	«	«	« 10.369	«	
« 88-89	« 7.157	« 4.195	«	«	« 11.352	«	
« 89-90	« 6.890	« 3.965	«	«	« 10.855	«	

Միջ. թիւ 1 տարւայ համ. 6.274 3.750 10.024

Եթէ այս թւերից հանենք Աստրախան քաղաքի աղայոց և օրիորդաց ծխ. ուսումնարաններում սովորողներին (մօտ 125), այն ժամանակ ճիշտ հասկացողութիւն կը կազմենք ամբողջ Կովկասեան շրջանի հայոց ծխ. ուսումնարաններում եղած երկու սեռի հայ երեխաների թւի մասին: Վերջի տարւայ նուազումը հասկանալի է, որովհետեւ, ինչպէս տեսանք, մի քանի ուսումնարաններ 1889—90 ուս. տարում կամ չէին բացուել նիւթական միջոցների պակասութեան պատճառով կամ փակուել էին հոգեւոր վարչութեան կարգադրութեամբ:

Համեմատելով վերոյիշեալ թւերը ուսումնարանների թւի հետ հեշտ է դուրս բերել որ 1 տղայոց ծխական ուսումնարանին ընկնում են միջին թւով 62 հոգի, իսկ մի օրիորդաց ուսումնարանին՝ միջին թւով 77 հոգի: Ընդհանրապէս մէկ ծխ. ուսումնարանին 68 հոգի է ընկնում, թէև առանձին վերցրած՝ կան ծխ. ուսումնարաններ 391 սովորողներով կամ 68-ից պակաս աշակերտներով:

Վերև բերած միջին թւերից երևում է որ մեր օրիորդաց ուսումնարանները աւելի բազմամարդ են, որովհետեւ նրանց թիւը շատ սակաւ է համեմատած աշակերտուհիների հետ, թէև այս վերջինները բոլոր

սովորողների 37% են կազմում: Պէտք է աւելի մեծ ուշադրութիւն այս կէտի վրայ, որովհետեւ, ինչպէս ներքեւ կը տեսնենք, մեր իզական սեռի ահագին մեծամասնութիւնը իւր ուսումը ստանում է մեր ծխ. ուսումնարաններում և, եթէ այս վերջինների թիւը այդքան սակաւ է, այդ ուղղակի ազդում է մեր իզական սեռի զրազէտների թւի վրայ: 1890 թւակ. «ОТЧЕТЪ»-ից երեւում է, որ Կովկասեան շրջանի ամեն կարգի թէ պետական և մասնաւոր ուսումնարաններում սովորող հայուհիների թիւը հազու. հասնում էր 900-ի, որոնցից 737 հոգի զինւազինա. ներում և պրօգրէմազիններում: Այս հիմնարկութիւններում սովորող հայուհիներից, ի միջի այլոց նկատենք, իրանց մայրենի լեզուն, որ անպարտադիր առարկայ է, ուսանում են միայն 62,7%, մինչդեռ վրացուհիներից համարեա բոլորը (98%) ուսանում են վրացերէն....

* *

Ունենալով այս բոլոր տեղեկութիւնները մենք դեռ չենք կարող որոշել զրազէտների թիւը մեզանում: Այդ հաշիւը սովորաբար անում են համարելով նորակոչ զինուորների մէջ անզրազէտների թիւը: Jurashek-ը այդ խնդրի նկատմամբ հետեւալ թւերն է ցոյց տալիս ուրիշ երկրների մասին. 1000 նորկոչ զինուորից (1888 թ.) անզրազէտ էին.

Գերմանիայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում (Եւրոպ.)

6

104

718

Չունենալով միջոց նոյնը իմանալ հայ զինուոր. ների համար, մենք, որպէս զի աւելի ևս շօշափելի լինին մեր ասածները թէ առհասարակ ուսումնարան. ների սակաւութեան մասին և թէ ծխ. ուսումնարանների ահագին նշանակութեան մասին, կը մաս. նաւորենք խնդիրը, վերցնելով, իբրեւ օրինակ, Սնդր. կովկասի նահանգներից ամենահայաշատը՝ Երևանեանը, ուր հայերի թիւը 1889 թւականի համար կարելի է պաշտօնական տեղեկութիւնների հիման վրայ ընդունել առնուազը 370 հազար:

Այդ տարին ամբողջ նահանգում կային 23 ուսաց սկղբնական ուսումնարաններ, 661 հայ աշակերտներով: Պէտք է նկատել, որ ոչ մի նահանգում սկղբնական ուսումնարաններում սովորող հայ երե. խանների թիւը այնպիսի մեծ տոկոս չի կազմում, ինչպէս այս նահանգում (61%): Հայոց ծխ. ուսում. նարանների թիւը հաւասար էր 43-ի, 3459 սովորողներով: Բացի այս երկու կարգի ուսումնարաններից նոյն նահանգում կային 4 միջնակարգ, 3 ստորակարգ և 4 մասնաւոր ուսումնարաններ, ընդամենը 715 հայ երեխաներով: Կցելով այս թւին սկղբնական ուսումնարաններում սովորող հայ աշակերտ. ների թիւը (661) կը ստանանք 1376 հոգի, այսին. քըն թէ այդ նահանգի ամեն տեսակի ոչ հայոց ուսումնարաններում սովորող հայերի թիւը աւելի քան երկու անգամ պակաս էր, քան նոյն նահանգի միմիայն հայոց ծխ. ուսումնարաններում սովորողների: Մենք դեռ չենք հաշուում Երևանի թեմա.

ժող. կրթութ. գործը

2

կան զարոյր 275 սովորողներով, որոնք բոլորը, ինչպէս և Էջմիածնի ձեմարանում 117 սովորողներից 47-ը նոյն նահանգից էին: Ուրեմն այդ նահանգի հայ երեխաներից սովորում էին հայոց ուսումնարաններում $3459 + 275 + 47 = 3781$ հոգի, իսկ նահանգիս ամեն տեսակ թէ հայոց և պետական ու մասնաւոր ուսումնարաններում սովորում էին $3781 + 1376 = 5157$ հոգի, այսինքն 10 հազար բնակչից 139 կամ ուսումնարանական հասակ ունեցողների 9,2%: Այս թւից 6,2% ընկնում է հայոց ծխ. ուսումնարաններին, ուրեմն եթէ չը լինէին այս վերջինները, կունենայինք 3%, իսկ եթէ չը լինէին նաև հայոց թեմական դպրոցը և Էջմիածնի ձեմարանը՝ կըստանայինք 2%, այսինքն ուսումնարանական հասակի հարիւր երեխայից միայն երկուսը ուսում կըստանային:

Մեր վերև ասածները վերաբերում էր ընդհանրապէս երկու սեռի երեխաներին: Եթէ առանձին քընները նոյն նահանգի իզական սեռի կըթուլթուեն, կը հանգիպենք աւելի ևս անմխիթար իրողութեան: Այդ նահանգի հայոց ծխական ուսումնարաններում սովորողներից 1025-ը աղջիկներ էին: Բայցի ծխական ուսումնարաններից այդ նահանգում կային 1 իգական պրօգրիմագիտ երեւանում և միւսը՝ Ալեքսանդրօպօլում: Երկուսում հայուհիների թիւը 101 էր: Ուրիշ ոչ մի օրիորդաց ուսումնարան չըկար նահանգում: ուրեմն, եթէ չըլինէին հայոց ծխական ուսումնարանները, մօտ 173 հազար հայուհիներից ու-

սում կ'առնէին միմիայն 101 հոգի, այսինքն 10 հազար հոգուց միայն 5 հոգի, իսկ ուսումնարանական հասակի իւրաքանչիւր 1500 աղջկերանցից հազիւ (0,7) մէկը: Եւ այդ սարսափելի նուազ թիւը բարձրանում է հայոց ծխական ուսումնարանների շնորհիւ, ուր սովորում են ուսումնարանական հասակին պատկանող հայուհիներից 4%: Այնուամենայնիւ իրողութիւնը այն է որ հայաշատ երեւանեան նահանգի իւրաքանչիւր 100 «փափկասուն տիկիներից» 96-ը գրել-կարդալ չեն գիտենայու: Եւ Արարատեան աշխարհը համեմատած Սիւնիքի հետ դեռ գեղեցիկ բացառութիւն է կազմում: Եթէ ամբողջ Կովկասի հայուհիների թիւը ընդունենք մօտ 440 հազար, կըտեսնենք որ այդ բոլոր թւից maximum 5000 հոգի են ուսում ստանում ամեն տեսակի թէ հայոց և թէ պետական ու մասնաւոր ուսումնարաններում և այդ թւից մօտ 4000-ը՝ հայոց ծխական ուսումնարաններում, մինչդեռ արական սեռից ուսում էին առնում մօտ 17 հազար, որոնցից $7\frac{1}{2}$ հազարը հայոց ծխական և թեմական ուսումնարաններում:

Բոլոր ասածներից ահկայտ երեւում է որ մեր ծխական ուսումնարանները մեծապէս նեղացնում են խաւարի տիրապետութեան լայնատարած սահմանները, որոնց ընդարձակութեան մասին զաղափար տալու համար, եթէ վերև ասածն էլ բաւական չէ, ընթերցողին կասենք որ, օրինակ, Գանձակի նահանգի 1519 գիւղերից, որոնցից 353 զուտ հայ, ընկնում

են 32 սկզբնական և 19 հայոց ծխական ուսումնարաններ. համարեա նոյնը և բոլոր միւս նահանգներում:

* * *

Գալով մեր ծխական ուսումնարանների նիւթական զրուծեան, տեսնում ենք որ նա շատ էլ աննախանձելի չէ և միջոցների սղութիւնը շատ տեղ արգելք է նոցա բացման կամ ընդարձակման: Մեր ծխական ուսումնարանները պահպանւում են եկեղեցական արդիւնքներով, սովորողներից ստացած թոշակներով և ժողովրդի կամաւոր նուիրատութիւններով: Ծախսուած է.

Ուսում. տարի.	Գումար.
1886—87	143,179 ռ.
87—88	172,091 »
88—89	204,823 »
89—90	184,209 »

մի տարում միջին թւով. . 176.075 »

Մի ուսումնարանի վրայ միջին թւով ծախք ընկնում է 1206 ռ., իսկ իւրաքանչիւր սովորողի վրայ տարեկան ծախք միջին թւով 17,5 ռուբլի:

Ռուսաց 1 սկզբնական ուսումնարանի վրայ տարեկան ծախք միջին թւով լինում է 800 ռ., և 13 ռ. մի սովորողի վրայ. իսկ քաղաքային մի ուսումնարանի վրայ 5.597 ռ., և 31 ռուբլի մի սովորողի:

Պէտք է նկատել որ պետական սկզբնական ուսումնարանների եկամուտի 60% շինական և քաղաքային հասարակութիւններն են տալիս:

Ի հարկէ, վերեւ բերած տարեկան ծախքի միջին թիւը 1 ուսումնարանի համար բաւականին զանազանւում է իրականութիւնից, որովհետեւ մեզանում կան երկդասեան և միդասեան, հարուստ և աղքատ ուսումնարաններ: Օրինակ, Թիֆլիսի Յոգնանեան երկդասեան ծխ. ուսումնարանի տարեկան ծախքը 1888—89 ուս. տարում էր 10, 177 ռ., Գայանեան ուսումնարանինը՝ 6661 ռ., Երեւանի Գայանեան երկդ. ծխ. ուսումնարանի վրայ 3974 ռ., Ալեքսանդրօպօլի ս. Փկրիչ եկեղ. աղայոց երկդաս. ուսումնարանի վրայ 4987 ռ., Իզդիրի տղ. երկ. ուս. 2290 ռ., Բաթումի տղ. միգ. ուս. 1080 ռ., Աստապատի տղ. միգ. ուս. վրայ 120 ռ. ևն.:

Թէեւ բոլոր ուսումնարանների եկամուտները միասին առած աւելի են քան նոցա վրայ արած ծախքը, որ. վերոյիշեալ թւականին տարեկան մուտքն էր 229 հազար, իսկ ծախքը՝ 204,823 ռ., բայց առանձին վերջրած կան ուսումնարաններ, որոնց եկամուտները այնքան նուազ են, որ հազիւ են ծածկում իրանց ծախքը, այն էլ ստիպուած են լինում վարձել մի անձուրացած ուսուցիչ 100 ռուբլի տարեկան ոռձկով... Մինչդեռ այլ վերաբերութիւն մեր հոգեւոր կառավարութեան կողմից դէպի մեր եկեղեցականապաշտկան կալուածները¹⁾ ոչ միայն կաւելացնէր

1) Տես «Այց Թիւրքաց Հայաստանին» եր. 10, 11:

նրա ուրիշ ծախքերի համար հարկաւոր եկամուտը, այլ և միջոց կը տար իւրաքանչիւր թեմի կալուածների աւելորդ արդիւնքներից օգնութիւն հասցնել չքաւոր զիւղական ուսումնարաններին, որոնց վրայ տարաբախտաբար քիչ ուշադրութիւն են դարձնում և մեր բարեգործական ընկերութիւնները, որոնք աւելի նպատակայարմար են դատում արտասահման ուղարկել որդեգիրներ աստուածաբանութիւն ուսանելու համար: Աստուածաբանների համար կըգտնուեն միջոցներ, դուք տուէք աղքատ ու ազէտ ժողովրդին ուսումնարաններ և այս վերջինների համար պատրաստուած վարժապետներ. . .

* * *

Եթէ ասեմք «ուսուցիչը ուսումնարանի հոգին է, նա նոր սերնդի մտաւոր ու բարոյական կերպարանը տուողն է, նա Եպագայ հունձի սերմնացանն է» — կարծում ենք հռետորական համեմատութիւններ չեն լինի այդ խօսքերը: Շատերի յիշողութեան մէջ են երևի, Փրանկ-պրուսական պատերազմից յետոյ, յաղթող պրուսացիների խօսքերը թէ՛ ոչ պրուսական զինուորը, այլ պրուսական ժողովրդական ուսուցիչը յաղթեց Փրանսիացիներին: Ինչ վերաբերում է մեր հասարակութեան, նա, ինչպէս ցոյց է տալիս մեզ մեր ուսումնարանական կեանքը, դեռ շատ հեռու է հայ ուսուցչին մեծ կարեւորութիւն տալուց: Ստրկական հոգով մեծացած ազգերին յատուկ արհամամար-

հանքով է վերաբերում հայը դէպի ամեն մէկը, որը իրանից կախում ունի և զղուելի շողորթութեամբ ու ակնածութեամբ դէպի նա, ով իրանից կախում չ'ունի, թէկուզ անպայման անօգուտ և մինչև անգամ վնասակար լինի այդ անձը մեր հասարակութեան համար:

Ուսուցանողների թիւը հայոց ծխական ուսումնարաններում վերջին 4 տարուայ ընթացքում բաւական տատանուել է, ինչպէս տեսնում ենք ներքեւ բերածից:

	1886—87	1887—88	1888—89	1889—90
Ուսուցիչ . .	195	272	314	284
Վարժուհի . .	95	114	130	109
Քահանայ . .	54	83	77	80
Ընդամենը . .	344	469	521	473

Միջին թւով մի ուսումնարանին ընկնում են 3 ուսուցանողներ և մի ուսուցանողին 22 սովորող: Ուսուցանողների ահադին մեծամասնութիւնը (70%) մեր թեմական դպրոցներից է, յետոյ պետական ուսումնարաններից (27%), մնացածը էջմիածնի ձեմարանից և արքունի ուսուցանողներից: Աւելի որոշ տեղեկութիւններ մեր ծխական ուսումնարանների ուսուցիչների ցենզի նկատմամբ տալիս է 1890 թ. էջմիածնում լոյս տեսած «Ընդհանուր ցուցակ անձանց յորոց ընտրեցան ուսուցիչք և ուսուցչուհիք վասն եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց» հրատարակութիւնը, որից իմանում ենք որ 419

ուսուցիչներից 6 հոգի բարձրագույն կրթութիւն ունէին, 28 էջմիածնի ծեմարանի մասնագիտական բաժնից աւարտած, 201-ը հայոց թեմական դպրոցներում աւարտած և 95 հոգի՝ արքունական ուսումնարաններից ստացած ուսուցչութեան վկայականներ, մնացածները «արտօնեալք ի վեհափառ Հայրապետէ»։ Նոյնը չի կարելի իմանալ յիշեալ հրատարակութիւնից վարժուհիների մասին, որովհետեւ թէեւ ցուցակագրուած 201 հոգուց 93-ը աւարտել են միջնակարգ ուսումնարաններում, բայց թէ քանիսը դոցանից ձեռք են բերած ուսուցչութեան վկայական՝ յայտնի չէ։ 1889 թւի մարտի 22-ին տուած բարձրագոյն հրամանով պահանջուում է որ ուսուց յեղուի, ուսուց պատմութեան և Ռուսաստանի աշխարհագրութեան ուսուցիչները կամ վարժուհիները ունենան ուսուցչական սահմանած վկայականներ։ Թէեւ 1889 թ. Մակար կաթողիկոսի հաստատած ծրագրով վերացրած են մեր ծխական ուսումնարաններում պատմութեան և աշխարհագրութեան դասերը, ուրեմն սահմանած վկայականներով աւելի քիչ ուսուցիչներ են պահանջուում, բայց նախ՝ ոչ ներկայ ծրագիրն է մի անյոգւողը և կատարեալ բան, ոչ էլ ուսումնարանների թիւը մի որոշած minimum, որից աւելանալ չեն կարող, ի նկատի չունենալով դեռ այն հանգամանքը որ եղած ուսումնարանների համար էլ բաւական թւով ուսուցիչներ չբիւն։ Կովկասեան Ուս. նրջ. պ. հոգաբարձուի ասելով, հայոց ծխական ուսումնարաններում 1889—90 ուս. տա-

րում ուսուցչութիւն անողներից միայն 29 հոգի ունէին պահանջած վկայականները (10,4%), իսկ վարժուհիներից 6 հոգի (5,8%)։ Համեմատելով մեր վերեւ բերած թւերի հետ, դժուար բացատրելի է այս դանաղանութիւնը։ Հետաքրքրական է այստեղ մի համեմատութիւն. ուսուց սկզբնական ուսումնարաններում ուսուցանողներից անհրաժեշտ մանկավարժական պատրաստութիւն (ուսուցիչները—ուսուցչական ինստիտուտից, սեմինարիաներից, իսկ վարժուհիները՝ մանկավարժական կուրսերը լսած կամ գիմնազիաների VIII դասարանից աւարտած) ունէին միայն 52,8%։ Մեր ուսումնարանների նկատմամբ հաշւի չեն առնուում էջ. ծեմարանում և թեմական դպրոցներում աւարտածները, մինչդեռ հազիւ թէ մեծ տարբերութիւն լինի սրանց և ուսուցչական սեմինարեաներում ուսածների մանկավարժական պատրաստութեան մէջ։

Այսպէս թէ այնպէս, այս խնդիրը մեր ուսումնարանների մօտալուտ ապագայի համար ամենածանր մտատանջութեան առարկայ պէտք է համարուի։

Գալով մեր ծխական ուսումնարանների ուսուցիչների հասարակական և նիւթական դրութեան արդի վիճակին, պիտի համոզուենք որ շատ անմխիթար է։ Այնքան անապահով է նա նիւթապէս և այնքան կախուած նրա վիճակը ուրիշների կամայականութիւնից որ նա դառնում է մի խեղճ, ձնշուած արհեստաւոր։

(Երկրորդ հատու նայ թիւում մարմանի (հայրապետ) Երկրորդ, 1 ծաղաքից դու մանկուն)

* *

Իւրաքանչիւր անձ, որ ուզում է ուսուցչական պաշտօն ստանձնել մեր ծխական ուսումնարաններում ներկայ կանոններով, պէտք է. 1) խնդրամատոյց լինի Վ. կաթողիկոսին, կցելով խնդրագրի հետ ուսման վկայական և ծանուցանելով իւր անցեալ գործունէութեան, մասին, 2) Հաստատուելով Վեհափառից, պիտի մոլորութի ուսուցիչների ընդհանուր ցուցակի մէջ, որի կազմելում մեծ ազդեցութիւն ունի նաև Ուսումնական Խորհրդի անդամների կարծիքը, 3) խնդրամատոյց լինի այն թեմի առաջնորդին, ուր գտնուում է ուսումնարանը, որում ուզում է ուսուցիչը ծառայել. թեմական տեսչի բարեհաճութիւնը վճռող նշանակութիւն ունի խնդրի ընդունելու կամ մերժելու նկատմամբ, 4) խնդրամատոյց լինի ուսումնարանի աւագ ուսուցչին (որ նշանակւում է ս. առաջնորդից կամ թեմական տեսչից), որ սա ինքը հաւանելով նորան, խորհրդակցի հոգաբարձուների հետ և ստանալով սրանց հաւանութիւնն էլ, առաջարկի հաստատութեան համար թեմական առաջնորդին: Ուրեմն, որպէս զի մէկը դառնայ ուսուցիչ մեր ծխական ուսումնարաններում, պէտք է զրա համար հաւանութիւն կաթողիկոսի, Ուսումնական Խորհրդի անդամների, թեմական առաջնորդի, թեմական տեսչի (քահանայ), աւագ ուսուցչի (նշանակւում է թեմական տեսչից կամ առաջնորդից) և հոգաբարձութեան, որ բաղկացած է քահանայից (նախագահ),

երեսփոխից և ծխականներից ընտրուած մէկ կամ երկու (եթէ ուսումնարանը երկդասեան է) աշխարհական հոգաբարձուներից: Գործնական կետերում խնդիրը համարեա վճռում են առաջնորդը և թեմական տեսուչը: Աւելորդ ձեականութիւնների չափազանցութիւնը և հոգեորականութեան բացարձակ գերակշռութիւնը ուսուցչի վիճակի նկատմամբ ակնյայտնի է: Որչափ բարդ ձեականութիւններով է ընդունւում ուսուցիչը ծխական ուսումնարան, նոյնքան պարզ կարգադրութեամբ, շատ անգամ մի անձնաւորութեան քմահաճութեամբ նա կարող է արտաքսուել, փոխուել առանց որ և է քննութեան կամ բացատրութեան. բաւական է թեմական տեսուչ քահանայի կամ առաջնորդի կամքը:

Գալով նիւթական դրութեան, մենք տեսնում ենք որ մեր ծխական ուսումնարաններում 1 ուսուցանողի տարեկան ռոճիկը միջին թւով է 306 ռ.: Այս միջին թւից շատ են տարբերւում գոյութիւն ունեցող maximum minimum'ները: Կայ ծխական ուսումնարան, ուր աւագ ուսուցիչը 10 դասի համար ստանում է 2000 ռ., բնակարան և վառելիք (Թիֆլիսի Յովնանեան օր. ուս.), բայց կան աւագ ուսուցիչներ էլ, որոնք 22 դասի համար ստանում են միայն 400 ռ., ուսուցիչներ, որոնք 37 դասի համար տարեկան ստանում են 120 ռ. (Աստապատ), 70 դասի (!) համար 200 ռ. (Չահակ), ևն:

Ցանկանալով կանոնաւորել ծխ. ուսուցիչների ռոճիկի բաշխումը, էջմ. Ուս. Խորհուրդը 1890—91

ուս. տարւոյ Համար Հրապարակեց յայտնի «Կոպարները»: Սյս վերջինները թէև մտցնում են յայտնի միաձեռութիւն, բայց միևնոյն ժամանակ հիմնուած են այնպիսի սկզբունքների և հաշիւների վրայ, որ հակառակ են ոչ միայն մանկավարժութեան, այլ մի քանի կէտերում՝ նոյն իսկ առողջ մաքի: Վերոյիշեալ կանոններով մեր ծխական ուսումնարանները բաժանւում են երկու կարգի՝ I կոպարով և II կոպարով վարձատրող ուսումնարաններ: Բացի այդ, դասաւանդող աւարկաները ըստ վարձատրութեան չափի բաժանւում են նոյնպէս երկու կարգի: Բարձր վարձատրութիւն արւում է՝ կրօնի, հայոց, ռուսաց լեզուների և ձեռագործութեան դասերի համար, իսկ ստոր վարձ՝ թւաբանութեան, բնագիտութեան, զծագրութեան և երգեցողութեան համար: Սյնպէս որ, I կոպարի ուսումնարանում կրօնի, լեզուների և ձեռագործութեան շաբաթական 1 դասը գնահատւում է տարեկան 20 ռուբլիով, իսկ թւաբանութեան, բնագիտութեան, զծագրութեան և երգեցողութեան 1 դասը՝ 15 ռուբլիով: II կոպարի ուսումնարաններում՝ կրօնի, լեզուների և ձեռագործի շաբաթական 1 դասի համար տարեկան 15 ռուբ., իսկ թւաբանութեան, բնագիտութեան և այլն՝ 10 ռուբլի:

Սյս որոշ չափերից դուրս գալ ցանկացող ուսումնարանների առաջ դրուած են այնպիսի խոչնդոտներ, որ շատ քիչերը ցանկութիւն կ'ունենան այդ անել: Նորա պէտք է առանձին կոպարի նախահաշիւ

կազմեն, յականէ յանուանէ որոշելով այն անձերին, որոնց կամենում են պաշտօնի հրաւիրել, քանակը այն թոշակների որ կը կամենան սահմանել իւրաքանչիւր ժամի համար, պահպանելով վերոյիշեալ խտրութիւնը աւարկանների վարձատրութեան մէջ. որ, թւաբանութեան ուսուցիչը, եթէ նոյն իսկ համալսարանական լինի, նրա դասական վարձը աւելի պակաս պէտք է լինի, քան կրօնի և լեզուների ուսուցիչների վարձը, որքան և սոցա ցենզը ստոր լինի: Սյս նոր նախահաշիւը պէտք է առաջարկել առաջնորդին, որը իւր կողմից ուղարկում է էջմիածնի Ուսումնական Խորհրդին, ուր կարող է և մերժուել: Առանց դժուարացնող ձեւականութիւնների էլ այնքան քիչ է զարգացած մեր հասարակութեան մէջ ուսուցչի աշխատանքը լաւ գնահատելու գիտակցութիւնը որ, եթէ չը լինէին էլ այդ ձեւականութիւնները, մեր ուսումնարանների վարչութիւնները այնուամենայնիւ կ'օգտուէին կոպարների տրամադրութիւնից՝ պակասացնել ոռձիկները. իսկ այժմ նոյն իսկ աչքի առաջ ունենալով վերեւ բերած խոչնդոտները աւելի հանդիստ սըրտով այդ կ'անեն:

«Կոպարներ» մտցնելով, մեր ուսումնարանների բարեկարգիչները կարծել են, թէ դորանով «վերջ կը տրուի ուսուցիչների և ուսուցչուհիների ընդհանուր ձգտումին պաշտօնական տարութեան այնպիսի տեղեր գնալ, ուր կարող են իրանց ցանկացած ոռձիկը ստանալ, և դորանից առաջացող ուսուցիչներ

րի յաճախակի տեղափոխութիւններին, որ ուսման կանոնաւոր ընթացքի խանգարման զխաւսոր պատճառն է»:

Բայց տեսնենք՝ ո՞րքան առաջարկած միջոցներով վերացնուած են «յաճախակի տեղափոխութիւնները»: Նախ՝ ուսուցիչների տեղափոխութիւնների պատճառը միայն ուսիչների տարբերութիւնը չէ, այլ մեծ մասամբ այն, որ մեր դպրոցներում ուսուցչին հեռացնելուց հեշտ բան չը կայ. բաւական է թեմական տեսչի, առաջնորդի, աւագ ուսուցչի կամ հոգաբարձութեան վճիռը: Երկրորդ՝ բնական է մարդկանց ձգտումը դիմել այնտեղ, ուր աւելի ապահոված է նրանց դրութիւնը: Իսկ ուսիչի խտրութիւնը մնում է և՛ «կուպարներով»՝ այդ պարզ է այս մի քանի օրինակներից: Վերջենք առաջին կուպարի երկդասեան ուսումնարան. հայոց լեզուի ուսուցիչը ստանում է 30 դասի համար տարեկան 600 ռուբ. թւաբանութեան և բնագիտութեան ուսուցիչը 22 դասի համար 330 ռուբլի, կրօնի ուսուցիչը 18 դասի համար 360 ռուբլի: Երկդասեան, բայց II կուպարի ուսումնարանում գասերի նոյն քանակութեան համար հայոց լեզուի ուսուցիչը ստանում է 450 ռ., թւաբանութեան և բնագիտութեան ուսուցիչը 220 ռ., կրօնուսուցիչը 270 ռուբլի: Միգասեան ուսումնարանում I կուպարով հայոց լեզուի ուսուցիչը ստանում է 18 դասի համար 360 ռ., թւաբանութեան ուսուցիչը 12 դասի համար 180 ռ. միգասեան, բայց II կուպարով, հայոց լեզուի ուսուցիչը նոյն դասերի քա-

նակութեան համար ստանում է 270 ռուբլի, թւաբանութեան՝ 120 ռ.: Ուրեմն հայոց լեզուի ուսուցիչը կարող է ստանալ 600, 440, 360, 270 ռ. նայած թէ երկդասեան I կուպարով, երկդասեան II կուպարով, միադասեան I կուպարով, միադասեան II կուպարով— ուսումնարանում է ծառայում: Հասկանալի է որ «տեղափոխութեան ձգտումը» կուպարներով էլ նոյնն է մնում:

Բայցի այդ, «կուպարներով» աւելանում է և մի նորութիւն, որի հետ հաշտուել դժւար է. այնքան նա անարդար է: Մենք խօսում ենք դասաւանդող աւարկաների մէջ մոտորած խտրութեան մասին: Ուսուցիչը եթէ աւանդում է թւաբանութիւն և բնագիտութիւն՝ «կուպարով» նրա աշխատանքը աւելի քիչ է վարձատրուում, քան եթէ նա դաս է տալիս կրօն կամ լեզու. թւաբանութեան և բնագիտութեան ուսուցիչը 22 դասի համար ամենաբարձր վարձատրութիւն որ կարող է ստանալ՝ է 330 ռ., իսկ սովորական (II կուպ.) 220 ռուբլի, մինչդեռ եթէ նա նոյնքան դաս ունենար կրօնից կամ լեզուից՝ կը ստանար 440 և 340 ռ.:

Սյս խտրութիւնը այն հետեանքը կ'ունենայ որ թւաբանութեան, բնագիտութեան և այլ «երկրորդական» համարուած առարկաների ուսուցիչները, անկարող լինելով կառավարել կուպարներով սահմանած չնչին ուսիչով, հարկադրուած պէտք է կամ ընտրեն առաջին կարգի առարկաների գասերը, կամ պէտք է բոլորովին թողնեն ուսուցչութիւնը հայոց

ծխ. ուսումնարաններում, որովհետեւ դժուար է ենթադրել որ մի ուսուցիչ թւաբանութեան դասեր յանձն առնելով, դորանով յանձն է առնում աւելի քիչ ուսել կամ Դիողէնի պէս տակառում ապրել: Եթէ լեզուների ուսուցիչը ստանալով տարեկան 600 կամ 450 ռ. հազիւ է կարող իւր գոյութիւնը պահպանել. ապա ի՞նչ կարող են անել «երկրորդական առարկաների» ուսուցիչները 330, 220, 180 և աւելի պակաս ռոճիկներով: Դուք երեակայեցէք դոցա դրութիւնը, եթէ դժբաղդները դեռ ընտանիքի տէր էլ են: Իսկ ենթադրել, որ մի ուսուցիչ ունենալով շաբաթական 22 դաս կարող է և ուրիշ դորձ գրանել՝ այդ ոչ հնարաւոր է, ոչ էլ ցանկալի է մանկավարժական տեսակէտից: Միայն քահանան միջոց ունի և ուրիշ աղբիւրներից յուսալ (թաղում, ամուսնութիւն, մկրտութիւն և այլն): 22 դասի համար շատ շատ 330 ռ., իսկ սովորական վարձ 220 ռուբլի. դա անում է ամսական 27 կամ 18 ռուբ. ենթադրէք որ ուսուցիչը քաղաքում է ապրում և դուք նորա տեղումն էք. արէք ձեր հաշիւները: Այս բոլորի հետևանքն ի՞նչ է: Իրանց աշխատութիւնը ու ցենզը փոքր ի շատեւ զնահատող ուսուցիչները կրթողն են իրանց սիրած պարագմունքները մեր ծրխական ուսումնարաններում, իսկ ասպարէզը կրմնայ պակաս հմութիւն ունեցողներին և անձարացածներին: Բայց թէ ցանկալի է արդեօք ժողովրդի կրթութեան գործը անձարացածների ձեռքը յանձնել՝ այդ թողնում եմ դատել իրան ընթերցողին:

Գուցէ մեր բարեկարգիչները, մտցնելով այսպիսի խտրութիւն, հիմնվել են այն համոզմունքի վրայ որ թւաբանութիւնը, բնագիտութիւնը և դժադրութիւնը աւելորդ են տարրական ուսումնարաններում, ինչպէս համարուեց աշխարհագրութիւնը. կամ թէ այդ առարկաների դաստանդութիւնը այնքան քիչ պատրաստութիւն է պահանջում ուսուցչի կողմից, որ ո՞ր և իցէ ցենզի կարօտութիւն էլ չըկայ նրանց համար... այդ էլ կարող է պատահել մեր դարում:

Վարձի խտրութիւն հիմնուած ուսուցիչների ցենզի տարբերութեան, կամ զիւղի և քաղաքի ապրուստի զանազանութեան վրայ՝ հասկանալի է: Եթէ ասենք՝ գիմնազիայի ուսուցիչը աւելի պէտք է ստանայ, քան գիւղական ուսումնարանի ուսուցիչը, որովհետեւ առաջնի համար պահանջում է աւելի երկար տարիների աշխատութիւն և աւելի մեծ պատրաստութիւն, համալսարանական ցենզ, իսկ երկրորդի համար միայն քաղաքային ուսումնարանում աւարտելը և առաջնի կիսնքի պահանջները աւելի մեծ են քան երկրորդի, ինչպէս և առ հասարակ քաղաքում ապրելը աւելի դժուար է քան գիւղում՝ հասկանալի կը լինի: Բայց դժուար է հաշտուել, երբ ձեզ ասում են, թէ միևնոյն ուսումնարանում, պարագած ժամերի միևնոյն քանակութեան համար վարձը պէտք է տարբեր լինի՝ նայած թէ առարկան կրօն է, թէ թւաբանութիւն, և առաջնի համար, իբրև աւելի յարգուածի, աւելի մեծ վարձ պէտք է նշանակուի: Կարծես, եթէ պետական սկզբնական ուսում՝ ժող. կրթութ. գործը

նարաններում թւարանութեան, բնագիտութեան և այլ առարկաների ուսուցիչը ստանում է մօտ 370 ր., իսկ կրօնուսուցչը միայն 76 ր., այդ պէս պատճառով է, որ քիչ է յարգուած այդ ուսումնարաններում կրօնը, այլ ոչ այն, որ քահանայն ունի եկամուտ և իւր ծուխից, թողած մի կողմը որ գուցէ աւելի քիչ աշխատանք է պահանջում այդ տեսակ առարկայի գաստութիւնը:

Եթէ բացի այս բոլորից մի քիչ աւելի խոր մտածենք մեր ծխական ուսումնարանների նշանակութեան մասին, մանաւանդ այնպիսի քաղաքներում, ուր նոքա պէտք է մրցեն զանազան մասնաւոր և այլ ուսումնարանների սկզբնական պատրաստողական տարիների հետ՝ աւելի ևս ակներև կը լինի որ ուսումնարանական գործը չի կարելի անձաքացածներին թողնել: Սյժմ քաղաքներում, օր. Թիֆլիս, Բաքու, Երևան, Շուշի, Դղլար, Մոզդուկ և այլն՝ շատ ծնողներ, անգամ ունենոր, իրանց երեխաներին, մանաւանդ աղջկերանց, տալիս են ծխական ուսումնարանները, ուր նոքա իրանց մանուկ, շուտ ապագորուող հասակում ստանում են մայրենի լեզուով նախապատրաստութիւն և յետոյ յաջող մտնում են պետական ուսումնարանների աւելի բարձր դասարանները (2-րդ, 3-րդ): Իսկ եթէ այդ քաղաքներում մեր ծխական ուսումնարանները աւելի վատ պայմաններում դրուած լինին, հասկանալի է որ նոքա, անկարող լինելով մրցել մոսնաւոր և այլ նախապատրաստող ուսումնարանների հետ՝ չեն զբաւիլ

ծնողներին, որոնք չեն ուզենալ ի զուր կորցնել տալ իրանց զաւակների տարիքը. ուրեմն նոցա երեխաներն էլ սկզբնական ուսում ստիպուած կը լինեն ստանալ ոչ հայոց ծխական ուսումնարաններում, ոչ մայրենի լեզուով: Հետեանքը պարզ է:

Սյստեղ միայն հարեանցի կերպով կ'ակնարկենք և այն իրողութեան վրայ, որ մեր զաւառների ուսուցչական խմբերը ներկայացնում են միակ ինտելիգենտ շրջանները, այդ թմրած անկիւններին միակ կեանք տւողը, և որչափ լաւ ոյժերից կազմուած լինեն այդ խմբերը, այնքան ինտենսիւ կը լինի նոցա գործունէութիւնը:

Մինք աւելի կանգ առնենք ուսուցչի նիւթական ապահովութեան խնդրի վրայ, որովհետեւ մինչև այդ չը լուծուի, միւս բոլոր պահանջները և դանդատները անհետեանք երեմիականներ ենք համարում: Ոչինչ այնքան չի ստորացնում, բարոյապէս չի ծնշում մարդկանց, որչափ նրանց տնտեսական անապահով և ուրիշի քմահաճութիւնից կախած դրութիւնը: Մինչև որ հայ ծխ. ուսուցչի վարձը հաւասար կը լինի խոհարարի վարձին՝ դժուար է սպասել որ մեր ուսուցչական դասակարգի մոաւոր բարոյական մակերեւոյթը յայտնի բարձրութեան վրայ մնայ և չ'ընկնի: Եթէ վարձատրութեան maximum-ը այնչափ է որ միջին կրթութիւն առած մարդու ամենահամեատ պահանջներին անգամ գոհացում չի տալիս՝ հասկանալի է որ այն ժամանակ նոքա յանձըն չեն առնիլ ուսուցչութիւն և նոցա անցը կը բռն-

նեն աւելի քիչ զարգացում և պատրաստութիւն ունեցող մարդիկ, որոնց պահանջներին զոհացում կը տայ և շատ չնչին վարձը: Չինացի բանւորները, օրինակ, կարողանում են ամենաչնչին օրավարձով բաւականանալ, որը սակայն աւելի զարգացած ամերիկացի բանւորի համար այնքան ստոր է թուում, որ նա դորանով զոհացնել չէ կարող իւր ամենաանհրաժեշտ կենսական պիտոյքները և այլ պտտածառով չէ համաձայնուիլ նոյն օրավարձով բանե: Իրամատէրը աշխատում է, ինչքան կարելի է, շատ շահ ստանալ իւր դրամագլխից. այդ պտտածառով նա ձգտում է որչափ կարելի է քիչ վարձատրել բանւորին, որի ունեցած չ'ունեցածը իւր երկու ջլոտ ձեռներն են. և որովհետեւ այդպիսի դրութեան մէջ զոհնող մարդկանց թիւը տարաբաղդաբար մեծ է, ուստի դրամատէրը կարող է ջոկել նրանց, որոնք աւելի արժան վարձով են բանում: Բանւորները, որպէս զի քաղցածութիւնից չը մեռնեն, իրար առաջ ուզում են տալ վարձը պակասեցնելով, որը մրցման շնորհիւ հասնում է արդէն այնպիսի minimum-ի որ միայն կարող է տալ այն, ինչ հարկաւոր է մարդու հասարակ գոյութիւնը պահպանելու համար: Հետեանքը այն է, որ բանւորական դասը կազմւում է ամենատղէտ, հարստահարուած և անձաբացած մարդկանցից, պրօլետարիայից: Ի՞նչն է ստիպում մեզ ստեղծել այդպիսի պրօլետարիատ ուսուցչական դասում: Միթէ մեր դրամագլուխը որ ուզում ենք շահեցնել իսկապէս ուսումնարանի փողն է և ոչ կր-

թուած նոր սերունդը, ժողովրդի լուսաւորութիւնը: Որչափ բարձր լինի և լայնատարած այդ լուսաւորութիւնը, այնչափ մեծ կը լինի և մոխած դրամագլխի շահը, իսկ այդ տեսակ մեծ շահ ստանալու համար պէտք է ունենալ լաւ պատրաստութիւն ունեցող, նիւթապէս անկախ բանւոր-ուսուցիչներ և ոչ պարիսներ:

Վարձ պէտք է նշանակել այնչափ, որ միջին կրթութիւն ստացած ուսուցիչը կարողանայ, թէև ամենահամեստ, բայց իւր կոչման վայել կերպով ապրել: Նայելով դիւղի և քաղաքի մէջ եղած կենսական պայմանների տարբերութեան, կարելի է որոշել վարձատրութեան յայտնի minimum-ներ: Այդ կ'ունենայ երկու նշանակութիւն. նախ դորանով կը սահմանափակուի ուսուցչի աշխատանքի ծայրահեղ հարստահարութիւնը, իսկ երկրորդ՝ այդ որոշ minimum-ով կը ստեղծւի նիւթական մի դրութիւն որ մրցում տեղի կ'ունենայ համեմատաբար աւելի բարձր ցենդ և պատրաստութիւն ունեցողների մէջ, քան եթէ այդ minimum-ը շատ ստոր լինի: Միւս կողմից ուսումնարանների վարչութիւններին պէտք է կատարեալ ազատութիւն տալ այդ որոշ չափից աւելի վարձ նշանակել, եթէ նոցա ուսումնարանի միջոցները ներում են: Արդարեւ, ինչո՞ւ, եթէ ուսումնարանը միջոց ունի աւելի լաւ պատրաստուած ուժեր հրաւիրել, որոնք աւելի բարձր են գնահատում իրանց աշխատանքը՝ չը թոյլ տալ նորան այդ անել: Եւ, ուսումնարաններում ուսուցչական ցենդի mini-

num հարելի է ընդունել թմամական դպրոցից, ուսուցչական սեմինարիայից, ուսուցչական ինստիտուտից և էջմ. ճեմարանից աւարտման վկայականներ, բայց այդ դեռ չպէտք է նշանակի որ այն ուսումնորանները, որոնք միջոց ունեն, չը պէտք է աւելի բարձր ցենզ ունեցողներին հրաւիրեն:

Վերև բերած խորհրդածութիւններից յետոյ մենք կարծում ենք որ ծխական ուսումնարանների համար ուսուցչական վարձի միայն minimum-ները կարելի է նշանակել: Մեր ունեցած տեղեկութիւնների հիման վրայ մենք կարծում ենք որ իբրև minimum տարին, շաբաթական 1 դասի համար, անխտիր որ առարկայ և լինի, գիւղական ուսումնարաններում կարելի է նշանակել 15 ռ., իսկ քաղաքայիններում՝ 25 ռ.: Եթէ եմթաղրենք որ իւրաքանչիւր ուսուցիչ ունենայ 25 դաս շաբաթական, որ շատ հնարաւոր է իրագործել, այն ժամանակ կըստանանք որ մեր գիւղական ծխակ. ուսումնարաններում տարեկան ոռձի minimum կըլինի 375 ռ., իսկ քաղաքային ծխ. ուս. ներում՝ 625 ռ.: Այն ժամանակ տեղի չեն ունենալ տարեկան 100, 140, 200 ռ. վարձատրութիւններ:

Այս min-ներով երկրասեան ուսումնարանների բիւջոէն քաղաքներում կըլինի մօտ 3600 ռ., իսկ գիւղերում 2200 ռ. միդասեան ուսումնարանների բիւջոէն—քաղաքներում 200 ռ., գիւղերում 1200 ռ.: Այն գիւղերում, ուր եկամուտները չեն բաւականանում այս նուազական չափով անգամ ուսումնարան պահել՝ կարող են միացած ոյժերով մի կենտ-


րոնական ուսումնարան պահել: Նոյնը մի քաղաքում եղած մի քանի չքաւոր ուսումնարանների մասին կարելի է ասել: 1888⁸⁹ ուս. տարում մեր ծխական 168 ուսումնարաններից 8-ը ունէին եկամուտ 6000-ից մինչև 13 հազար, 10-ը 3600—6000 ռ., 20-ը 2000-ից—3600 ռ., 30-ը 500—1200 ռ., իսկ մնացածների եկամուտները 500-ից էլ պակաս էին: Այս կարգի ուսումնարանները լինում են գիւղերում և չեն ունենում անգամ միդասեան ուսումնարանի բոլոր 3 բաժանմունքները, այլ մի կամ երկու բաժանմունք, իսկ շատերում լինում է մի ուսուցիչ, որ ուսուցանում է բոլոր առարկաները, պարագելով կէս-կէս ժամ մի դասարանում եղած 2 բաժանմունքներից իւրաքանչիւրում: Այս տեսակ ուսումնարաններ ունեցող գիւղերից շատերը յարմարութիւն չունեն պահել մի կենտրոնական ուսումնարան, որովհետև շրջապատւած են լինում թուրք կամ վրացաբնակ գիւղերով:

Ի՞նչ անեն այս կարգի և սոհասարակ շատ չքաւոր գիւղական ուսումնարանները: Այս խնդրի վերաբերումը կախուած է մեր եկեղեցա-վանքապատկան կալուածների և սոհասարակ նոցա եկամուտների կանոնաւոր հսկողութիւնից: Բոլորիս յայտնի է մեր եկեղեցա-վանքապատկան հարուստ և լայնատարած կալուածների ներկայ անխնամ դրութիւնը. նոքա ոչ միայն օգուտ չեն բերում մեր հոգեւոր կառավարութեան, այլ մինչև անգամ մեծ ծախսեր են նստում, մինչդեռ կանոնաւոր վերահսկողութիւնը կըբազմաց-

նի նոյա արդիւնքը որ փոխարէն մասնաւոր անձանց զրպանը լցնելու, կը լցնի մեր հոգեւոր վարչութեան գանձարանը: Այն ժամանակ իւրաքանչիւր թեմի հեղեցի-վանքապատկան կալուածներէից ստացած արդիւնքի մի մասով կարելի է ոչ միայն օժանդակութիւն տալ զիւղական աղքատ ուսումնարաններին, այլ և շատ չքաւոր գիւղերում բանալ նորերը: Ի հարկէ՝ մեր բարեգործական ընկերութիւններն էլ ունեն իրանց անելիքը այս գործում:

Վերջացնելով մեր տանիքը, չենք կարող այստեղ չաւելացնել որ շատ հարցերի մասին հարեանցօրէն խօսեցինք, չ'ուզեալով շեղուել մեր այս զրուածքի բուն նպատակից: Բայց այսքանիցս էլ երևում է մեր ծխ. ուսումնարանների այն թոյլ կողմերը, որոնց վրայ պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնի թէ մամուլը և թէ հոգեւոր վարչութիւնը: Ամեն մի օրէնք կամ կարգ որ կեանքի պահանջներին անհամապատասխան է, լինի դա հնանալու, թէ անգործնական կամ սխալ ենթադրութեան վրայ հիմնվելու պատճառով, ժամանակի ընթացքում փոփոխւում է և կատարելագործւում: Լուրջ քննադատութիւնը պարզելով ծագած խնդիրները՝ միայն հեշտացնում է պահանջուող փոփոխութեան կամ բարենորոգութեան պրոցեսի կանոնաւոր ընթացքը: Մեր բոլորիս նպատակը պէտք է լինի մեր ժողովրդի կրթութեան գործը գնել ըստ կարելւոյն լաւագոյն պայմաններում, և ամեն խոչնդոտ այդ ճանապարհից պէտք է աշխատենք հեռացնել: Մարդիկ, որոնք իրանց անսահման

խաւարամտութիւնը և ստոր հաշիւները ծածկելով ազդի և եկեղեցու միակ անկեղծ պաշտպանների դիմակի տակ, մուտք են գործում մեր նաև ուսումնարանական գործերում և ամեն բան պղտորում և ապականում՝ պէտք է մտածեն թէ ի՞նչ ուժիւր են գործում ժողովրդի կրթութեան դէմ, յառաջ տանելով իրանց «սկզբունքները», որ մաքի անձկութեան և կեղտոտ հաշիւների արգասիք է: Ներկայ պայմաններում մեր ծխ. ուսումնարանները հայ ժողովրդի կրթութեան գործում մեծ դեր են կատարում, ուստի նոքա պահանջում են թէ բարձր հոգեւոր վարչութեան և թէ հասարակութեան կողմից՝ առանձին հոգատարութիւն և պաշտպանութիւն խաւար ու յետադէմ հոսանքներից և Տարախֆների միջամտութիւնից:



Վ Ե Ր Ձ

խօղմեան զգծմեայ՝ զտաւ ի զմեկն լուսնայաւան
 -իւր զգծմանստեղար ճրճման թանի յօղմեմքն ի վերս
 Դասու ձամ զմե Կառնոր մմ ցաւն թաւ զմե
 ի Կառնորս մայ մմաւ ի Կառնորս մայմանայս
 մ զմե Կմ ի մե մմաւն ի ցաւն Կառնայս
 մմաւ Գաւալ, Կմ մմմեյ յեկի վրայ Կառնոր
 մմմեյ յեկմա մցան զո զգծմեմայս Կմալի իոյ
 -մանցար լայիմքն ի ցաւորս զգծմեմա՝ տարմքն ի
 վրայորս լայ զգծմանստեղարս զմե Կառնմ
 -ու Կառնայս մմ Գմ Զմ Կառնոր մմմեյ յեկի
 -դաւ զմար՝ զհասց իմ մ Կառնայս ագոմ իո
 մկնմաւ զմարս մմմեյ յեկայսաւ իմ ի մմմեյ յոյ
 -ու զոտոյ մմմեյ լուսնայաւան ի մմմեյ լուսնայաւան
 -տանայի վրայմ վաղա՛ն ի զգծմեմաւ Կմաւմ,
 զգծմեմ

Վ Ի Դ Ա Կ Ն Ե Բ

Երես	Տող		Սխալ		Ուղիղ		
9	1	ներքեւից	.	51,7	.	.	51,2
"	2	"	.	7,5	.	.	7,0
"	"	"	.	146	.	.	145,5
20	5	վերեւից		աննախանձեւի			նախանձեւի
23	11	"		99			90
"	3	ներքեւից		ընտրեցան			ընտրեցին
27	3	.	"	.	.	Զահակ	Զահուկ
38	4	.	"	.	.	200	2,000



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0349399

Լ. Սյուր-Մ.
1992

Գինը է 20 ԿՈՊ.

